ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/37

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից 12.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԼԻՆԿ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 12.03.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ս.թ. մարտի 7-ին հայտարարվել է ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով մրցույթ ֆինանսական վերլուծական և համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով:

ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով մրցույթի պայմանագրի Հավելված 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ Պատվիրատուն նշել է. «Կատարողն անժամկետ օգտագործման է հանձնում Պատվիրատուին «ՀԾ-Հաշվապահ 7» (հանրային հատված) համակարգ՝ 4 (չորս) աշխատատեղի համար նախատեսված համակարգչային ծրագիրը...» սույնով խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, այն է՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում

պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Պատվիրատուն մրցույթը հայտարարել է ս.թ. մարտի 7-ին ժամը 18:00-ին: Պարզաբանումների հարցման ժամկետ է սահմանվել 07.03.2019թ. ժամը 17:45-ից մինչև 10.03.2019թ. ժամը 14:30-ը: Քանի որ պարզաբանումների հարցման ժամկետը համընկել է տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ, ուստի Պատվիրատուից armeps.am կայքով պարզաբանում՝ օրենքի հետ վերը նշված անհամապատասխանության կապակցությամբ, ստանալ չենք կարողացել:

Ելնելով վերը շարադրվածից, դիմում ենք Ձեզ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված իրավասությունների շրջանակում պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ հայտարարել ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով մրցույթի ընթացակարգը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Վարդուհի Ավալյանը և Արթուր Մանուկյանը:

2. <u>ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից 12.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 19.03.2019թ. թիվ ԳԱ-712 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իր կարիքների համար ֆինանսական վերլուծության և հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթներ ձեռքբերելու նպատակով, 2019 թվականի մարտի 7-ին կազմակերպել է «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Մրցույթ): Գնման առարկայի տեխնիկական բնութագրիչները սահմանելիս Հանձնաժողովի գնումների պատասխանատու ստորաբաժանումը առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ

հոդվածի պահանջներով, մասնավորապես՝ սահմանվել է գնման առարկայի հստակ նկարագիր, որը համարժեք է այն կարիքին, ինչի բավարարման նպատակով պետք է կատարվի տվյալ գնումը:

Հարկ եմ համարում նշել նաև, որ հանրային հատվածի հաշվապահության համար նախատեսված «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգչային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) հանդիսանում է հեղանակային իրավունքի օբյեկտ, ուստի, հիմք ընդունելով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, Հանձնաժողովը, անկախ գնման առարկայի նախահաշվային արժեքից, գնման առարկան կարող էր ձեռք բերել համապատասխան իրավունքն ունեցող ընկերությունից՝ մեկ անձից գնման ընթացակարգով: Պետական գնումների գործընթացն առավել մրցակցային, բաց և թափանցիկ դարձնելու նպատակով, Հանձնաժողովը նախընտրել է գնման առարկան ձեռքբերել մրցակցային՝ էլեկտրոնային աճուրդի, այնուհետև գնանշման հարցման միջոցով իրականացվող գնման ընթացակարգերով՝ հնարավորություն տալով մի շարք ընկերությունների մասնակից դառնալու պետական գնման ընթացակարգին, այդպիսով հնարավոր դարձնելով նաև պետական միջոցների խնայողությունը:

Մրցույթի համար սահմանված պարզաբանումների հարցումներ կատարալու ժամկետը համընկել է տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ, ինչը, մեր կարծիքով, չէր կարող խոչընդոտել հնարավոր մասնակիցներին կատարել իրենց հարցումները: Մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հարցումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, պատասխանը կհրապարակեր Ֆինանսների նախարարության գնումների համակարգում՝ տեղեկագրում:

Ինչ վերաբերում է Մրցույթի տեխնիկական բնութագրի և Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի անհամապատասխանությանը, հայտնում եմ Ձեզ, որ Հանձնաժողովի կողմից գնման առարկային համարժեք ծրագրեր չեն դիտարկվել՝ ելնելով մի շարք հանգամանքներից: Մասնավորապես՝

1. Հանձնաժողովն իր հաշվապահական գործառույթները մինչ օրս իրականացրել և իրականացնում է Ծրագրի գործիքակազմի միջոցով,

2. Հանձնաժողովի հաշվապահական գործառույթներին առնչվող ամբողջ տեղեկատվությունը զետեղված է նույնանուն ծրագրի նախորդ տարբերակում և դրա հետագա տեղափոխումը հնարավոր կլիներ իրականացնել ավտոմատ եղանակով միայն նույն ծրագրի նոր տարբերակի միջոցով,

3. Պետական համակարգում գրեթե բոլոր մարմինների հաշվապահությունն իրականացվում է Ծրագրով, ինչը ենթադրում է, որ այլ ծրագրերով հանրային հատվածի հաշվապահության իրականացման դեպքում կառաջանան ծրագրային խոչընդոտներ:

Միաժամանակ հայտնում եմ Ձեզ, որ մինչև Մրցույթի հայտարարումը, Հանձնաժողովն ուսումնասիրել է այդ ոլորտը, հարցումներ է կատարել այդ ոլորտի մի շարք ընկերությունների, որի արդյունքում պարզվել է, որ այլ ծրագրերով հանրային հատվածի հաշվապահություն չի կարող իրականացվել: Ավելին, Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցները հանդիպել են նաև բողոք ներկայացրած ընկերության հետ և պարզել, որ նրանց կողմից առաջարկվող ծրագրերի միջոցով հնարավոր չէ իրականացնել հանրային հատվածի հաշվապահություն»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Զաբել Մաթևոսյանը, Խաչիկ Կարապետյանը, Հայկ Սարգսյանը և Տիգրան Սաֆարյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից 12.03.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի 19.03.2019թ. թիվ ԳԱ-712 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի կարիքների համար ֆինանսական վերլուծական և համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացկարգ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Կատարողն անժամկետ օգտագործման է հանձնում Պատվիրատուին «ՀԾ-Հաշվապահ 7» (հանրային հատված) համակարգ՝ 4 (չորս) աշխատատեղի համար նախատեսված համակարգչային ծրագիրը (այսուհետ՝ Համակարգ): Կատարողը պարտավոր է առնվազն 1 (մեկ) տարի սպասարկել Պատվիրատուի մոտ տեղադրված Համակարգը, որը ներառում է՝

1. Համակարգի շահագործման հետ կապված խորհրդատվություն:

2. Կատարողի կողմից՝ Համակարգի թարմացված տարբերակների առկայության դեպքում դրանց տրամադրում, որտեղ արտացոլված են հաշվապահական և հարկային հաշվառմանը վերաբերող լրամշակումները և նոր ֆունկցիոնալ հնարավորությունները:

3. Համակարգի թարմացված տարբերակները տրամադրվում են Կատարողի կողմից ընտրված եղանակներով:

4. Պատվիրատուի մոտ գործող հին ծրագրի ինֆորմացիայի տեղափոխում:

5. Սպասարկման հետ կապված աշխատանքները կարող են իրականացվել հեռահաղորդակցության միջոցով (հեռախոսակապ, ինտերնետ, էլ. փոստ), ինչպես նաև Պատվիրատուի կողմից նման պահանջ առաջանալու դեպքում Կատարողը սպասարկումը պետք է կատարի նաև Պատվիրատուի հասցեում: Ընտրված մասնակցի հետ կնքած պայմանագիրն, օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի 2 (երկու) աշխատակից կարող են մասնակցել Կատարողի կողմից կազմակերպվող «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի դասընթացներին:»:

«ԼԻՆԿ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող առարկայի այնպիսի տվյալներ, որոնք պարունակում են հղում՝ կոնկրետ համակարգչային ծրագրային փաթեթին՝ «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգին, ինչն ուղղակիորեն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին, չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում Ընթացակարգի հնարավոր մասնակիցների համար: Ընդ որում, Ընկերությունը նշել է, որ վերը նշված անհամապատասխանության վերաբերյալ Ընթացակարգի հանձնաժողովի կողմից armeps.am էլեկտրոնային կայքով չեն կարողացել ստանալ որևէ պարզաբանում, քանի որ Պատվիրատուն Հրավերով պարզաբանումների հարցման ժամկետ է սահմանել 07.03.2019թ. ժամը 17:45-ից մինչև 10.03.2019թ. ժամը 14:30-ը և այդ ժամկետը համընկել է տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ:

Պաատվիրատուի ներկայացուցիչն՝ անդրադառնալով Բողոքով վիճարկվող տեխնիկական բնութագրերին, ընդունեց, որ գնման առարկայի սահմանված բնութագրերը պարունակում են հղում կոնկրետ համակարգչային ծրագրին, սակայն նշեց, որ Հանձնաժողովի կողմից գնման առարկային համարժեք ծրագրեր չեն դիտարկվել՝ ելնելով մի շարք հանգամանքներից, մասնավորապես՝ Պատվիրատուն իր հաշվապահական գործառույթները մինչ օրս իրականացրել և իրականացնում է նշված ծրագրի գործիքակազմի

միջոցով, և այլ ծրագրերով հանրային հատվածի հաշվապահության իրականացման դեպքում անխուսափելիորեն կառաջանան ծրագրային խնդիրներ:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե կարող է արդյոք նշել որևէ իրավական ակտ, որը թույլ կտար մրցակցային գնման եղանակով գործընթացի շրջանակներում գնման առարկան նկարագրելիս՝ չկիրառել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իմպերատիվ պահանջը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ նման իրավանորմ չի կարող վկայակոչել:

Ինչ վերաբերում է Հրավերով սահմանված պարզաբանման հարցումներ ներկայացնելուն, ապա Պատվիրատուի ներկայացուցիչը համաձայնեց, որ նշված ժամկետը համընկել է տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ, սակայն նշեց, որ Պատվիրատուի կարծիքով, այն չէր կարող խոչընդոտել հնարավոր մասնակիցների կողմից հարցում կատարելուն, քանի որ Հանձնաժողովի քարտուղարը հարցումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը պարզաբանումը կհրապարակեր www.gnumner.am տեղեկագրում:

Ընթացակարգի Հրավերի՝

- 3.1 կետի համաձայն՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

-3.3 կետի համաձայն՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք)

- 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ

մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (...).

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

• 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է նույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Կանանց տոնը նշվում է մարտի 8-ին, ոչ աշխատանքային օր:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի պայմանագրի Հավելված 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրում առկա է հղում կոնկրետ համակարգչային ծրագրային փաթեթին՝ «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգին, սակայն տվյալ դեպքում գնման առարկայի հատկանիշների բնութագիրը չի պարունակում «կամ համարժեք» բառերը:

- 08.03.2019թ.-ից մինչև 10.03.2019թ. ներառյալ Հայաստանի Հանրապետությունում եղել են ոչ աշխատանքային օրեր՝ Կանանց տոնը՝ 08.03.2019թ., որին հաջորդել են շաբաթ և կիրակի օրերը՝ 09.03.2019թ.-10.03.2019թ.:

- Պատվիրատուն գնման ընթացակարգը հայտարարել է ս.թ. մարտի 7-ին ժամը 18:00-ին:

- Պարզաբանումների հարցման համար էլեկտրոնային գնումների armeps համակարգում սահմանվել է ժամկետ՝ 07.03.2019թ. ժամը 17:45-ից մինչև 10.03.2019թ. ժամը 14:30:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հրավերով նախատեսված գնման առարկայի բնութագրերը չեն բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում Ընկերությունն ըստ էության զրկված է եղել Հրավերի տեխնիկական բնութագրի վերաբերյալ պարզաբանում ստանալու հնարավորությունից, քանի որ պարզաբանումների հարցման համար էլեկտրոնային գնումների armeps համակարգում սահմանվել է ժամկետ՝ 07.03.2019թ. ժամը 17:45-ից մինչև 10.03.2019թ. ժամը 14:30, իսկ 08.03.2019թ.-ից մինչև 10.03.2019թ. ներառյալ Հայաստանի Հանրապետությունում եղել են ոչ աշխատանքային օրեր:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընթացակարգի հրավերը հաստատելիս՝ պարտավոր էր հաշվի առնել նույն հրավերով նախատեսված պարզաբանում ստանալու համար սահմանված ժամանակահատվածի և «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի» ՀՀ օրենքով ամրագրված ոչ աշխատանքային օրերի համընկնման հանգամանքը, որպեսզի մասնակիցները հնարավորություն ունենային իրացնելու գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված՝ հրավերի պարզաբանում ստանալու իրենց իրավունքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 12.03.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ